Սակայն վերջին արգելք մ'ալ դիմացնիս պիտի ելլէր։ Հանելով գրեթէ ի բարձունս ելլիցն որ կը տանի ի Շուշի, կը հանդիպինք վանառաքարձ մեծ սայլի մը. կարելի չէր անցնիլ՝ առանց մէկ կողմը ծռելու. ուստի ստիպուեցանք միւսանգամ կառքէն իջնել. կառավարը կարգէ դուրս խոր քնով մը ընկղմած էր. ականջէն վար կը պոռանք, ուժով կը շարժենք զինքը, անկարելի կ'ըլլայ արթնցընել։ Եւ որովհետև անձրեւը դեռ կը շարունակէր, մեր կառավարք կը մնածէն սայլը ծածկող լաթը վերցրնել, յուսալով որ անձրեւէն աչուքները կը բացուին. բայց այս հնարքն ալ սպասուած ելքը չունեցաւ։ Կը բանաղատուին այն ատեն՝ սայլն ու կառավարը ձեռքով հրելով մէկդի տանիլ, ու անով փայտոնին անցք բանալ՝ գահավիժելու վտանգէն հարիւր քանի մը հարիւրորդամեայ հեռուէն։

Այսպէս նեղութիւններով եղբը՝ յոգս վտանգ և ծիծաղելիներ իրարու մէջ կը խառնուին, ուր ուրեմն կը հասնինք ի Շուշի։

Շարունակելի

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(ՏԵՍ յէջ 109)

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԱՑԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ՄԵՂՈՒԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ, ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ, ԹՈՒՇՆԱՏԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՐՈՒԹՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. — Գիւղական տնտեսութեան այս մասն՝ իւրաքանչիւր գեղացւոյ համար անհրաժեշտ հանարուածներէն մին է, թէ և եղածն իսկ շատ մեծ բան մի չէ։ Հայ շինականն առանց պարտիզի և բանջարանոցի չի կրնար ապրիլ. նա կամ արտին մէջ անկիւն մի կ'որոշէ բանջարանոցի բուսոց համար, և կամ պարտիզին մէջ անոնց համար առանձին ածուներ կը շինէ։ Այս տեսակ բուսոց մէջ աւելի ուշադրութեան արժանի են Ցեխն ու Ջմեռուն։ Երկին տեսակ սեխ կայ, շաղտախ և տուտմա. առաջինն խիստ ցանցառ կը հանդիպի, որովհետև սեխի տեսակաց մէջ ամենէն ստորին տեսակն համարուած է. Ցուտման ընդհանրապէս բազմաթիւ տեսակներ ունի, որք գունով ու ձևով՝ այլ և համով ու անուշահոտութեամբ կը տարբերին։ Այդ տեսակներն մասնաւոր անուամբ չեն զանազանիր, բաց ի մի քանիէ որք իրենց կեղևներուն գունոց համեմատ կը կոչուին՝ նարը-

digitised by A.R.A.R.@

ջազոյն, կանանչ, դեղին, ճերմակ, և այլն. սակայն ամէնքն այլ միանգամայն երկու գոյն կը վերածին, ամառնային ու ձմեռնային։ Ցուտայից (¹) խնամքը ծանր և յամրաշարժ աշխատութիւն մ'է. հերկուած արտին վրայ կեարգիվարով ազեղնաձև փոսեր կը բանան, որք մինչև ի կէս ջրով կը լեցուին. ուռդմանէն երկու երեք օր վերջը՝ փոսերէն չոր հողը բահով կամ շաստայով կեղեւելով դուրս կը հանեն, և անոնց մէջ 2-3 բթաչափ խորութեամբ փոսիկներ կը բանան՝ իրարմէ 7—8 բթաչափ հեռաւորութեամբ. իւրաքանչիւրին մէջ մի քանի սերմ կը դնեն՝ առաջուց լաւ մը ջրոյ մէջ թրմած, և հողով կը ծածկեն։ Ցետ բողբոջներն ցցուելու՝ անգամ մ'այլ կ'ուռդեն։ Երբոր տուտմայի ջ. տերևներն կ'երևին, կը սկսին ծածկել. բայց նախ կ'ուռդեն և աւելորդ արմատները կը քաղեն, իւրաքանչիւր տեղ մի մի թողլով. ծածկելու մէջոց հողը փոսէն կ'առնուն՝ որով և այն բաւական կը խորնայ։ Երբ բոյսերն 6—7 բթաչափ բարձրանան՝ գլուխները կը կտրեն, անոնք ալ անկէ վերջը կը սկսին կողերէն ամէն կողմը ճիւղեր արձակել։ Երբ ճիւղերու վրայ պտղոց նախընծայ մասուրներն տեսնուին, անգամ մ'այլ ըզտուտմայն կ'ուռդեն, ապա և այն փոքր մասուրներն թքով թանալով հողու մէջ կը ծածկեն, որպէս զի անոնց մէջ որդեր չմնանեն։ Երկու օրէն պտուղը աղանոյ հաւկրթի չափ կը մեծնայ, և այն ատեն իւրաքանչիւրն իւր բոյսի սերտւոյը կը ծածկեն, չանալով առանց կտրելու պտղոյն վրայ ծուել. յետոյ վրան ալ հող կը լեցնեն, կոլմնակի օգոյ համար բաւական ծակ մի թողլով։ Անոնք հողի տակ այնպէս երագ կ'աճին՝ որ հարկ կը լինի ամէն օր գալ ու ծածկել հողով սեփերը։ Բաւական մեծացած տուտմայք՝ կը սկսին դեղնիլ. այն ատեն զանոնք բոլորովին կը բանան, և արևու կիզիչ ճառագայթներու առջեւ՝ երեք կամ չորս շաբաթուան մէջ՝ բոլորովին կը հասունանան։ Ամենալաւ սեպ բերող գիւղոյրքն են՝ Վերին Ագուլիս և Դաշտ (Ստորին Ագուլիս)՝ Որդուստու վիճակին մէջ, և Ալիապատ՝ Նախիջեւանու։ Վերջին գիւղս մինչև թուով տարուան մէջ 2000 պուդ տուտմա կը հասցնէ, որ երբեմն 400 ռուբլի կ'արժէ։

Նախիջեւանու Ջերուն ոչ մեծութեամբ՝ այլ համուն կը տարբերի և կը գովուի։—մինչև իսկ առակ եղած է բսել. «Նախիջեւանցին դուզը, գըզը, կարսուզը»։ (Նախիջեւանու աղն, աղջիկն ու ձմերուն)։

Բանջարանոցի բուսոց տեսակաց մէջ են՝ Գետնախնձոր (դեղնատերև), կաղամբ, Սուխ, Խստոր, Դիկոռ՝ բազմատեսակ, Սիսեռն, Ոսկն և ուրիշ շատ տեսակք։ Գետնախնձորի մշակութիւնը նոր ժամանակներս զարգացեալ մեծ մասնաւորապէս Քէօմուր և Ջրոնատուն գիւղերու մէջ։

1. Ցուտմա բառն յատաջ եկած է՝ բուն այդ սեռը գարմանելու եղանակէ. վասն զի Թաթարերէն ԹՈՒԹՄԱ ունեղ կը նշանակէ, իբր Թէ՝ բունեալ պահել հողի տակ։ Սեռն Թաթարերէն Ղաբուն կը կոչուի. Հայք ռամկօրէն խոսակցութեան մէջ զայն կրոր կը կոչեն, իսկ տուտմա անունը միայն Երևանու մէջ կուտան անոր։ Հեղինակն։

digitised by A.R.A.R.@

բնակիչներն ի Ռուսաց սորվեցան, երբ անոնց զօրագունդն Բիչանաղ կը կենար։ Սորա մշակութեան ձեռք զարկին նաև Դարալաղըզի բաժնին՝ Մարտիրոս, Սուլթան-բէկ և Սէս՝ գիւղերու մէջ։ Ցեռին գիւղս նշանաւոր է Բակլայի մշակութեամբ, և տարին մինչև 20 խալվար բակլայ (500 պութ) կը բերէ։

Այգեգործութիւն. — Ստորագրած վիճակացս մէջ գրեթէ ամէն տեղ այգեգործութեամբ կը զբաղին, ի բաց առեալ սակաւաթիւ լեռնային գիւղեր, յորս կարճատև ամառն և սաստիկ ձմեռն՝ կը խափանեն գիւղական տնտեսութեան այդ մասին մշակութիւնը։ Տեղւոյս պարտէզքն երկու տեսակ են՝ խաղողաւէտ և մրգաբեր։ 1873 տարւոյն հաւաքած հետազօտութեանցս համեմատ՝ առաջնոց թիւն կը հասնի 1,728, յորոց 1,275ը Հայոց է, և 453ն թաթարաց։ Իսկ երկրորդաց թիւն է իբր 3,581, յորոց 1,528ը՝ Հայոց և 2,253 պարտէզը այլ թաթարաց։ Ըստ այսմ միանգամայն թէ՝ այգեւէտ և թէ մրգաբեր պարտիզաց թիւն 5, 309 կը հասնի։ Ենթադրելով որ իւրաքանչիւր պարտէզ միջին թուով տարին 40 րուբլի մուտք բերէ, համագումար բոլոր պարտիզաց տարեկան մուտքն կը լինի 212,360 րուբլի։ Ըստ երեւութին այդ գումարն բաւական հաստատուն բան է, բայց իրօք բնակիչք և ոչ անոր տասներորդ մասն կ'ընդունին, որովհետև չորացուցեալ մրգերն միայն ի վաճառ կը տարուին, այն ևս սակաւ քանակութեամբ. վասն զի մեծաւ մասամբ բնակիչք իրենք կը սպառեն. ասոր պատճառն է տեղւոյն հաղորդակցութեան ճանապարհաց պակասութիւնը, որք Երեւանու գաւառի այդ մասին բերքերով ամենաճոխ երկրի մէջ՝ գիւղական տնտեսութեան ծաղկելուն գլխաւոր խափանարարներն են։

Այգեւէտ (1) պարտիզաց մշակութիւնը երկու տեսակ է. Որդուատու բաժնին մէջ՝ որթերը կը կապկըպեն յենարանաց վրայ հորիզոնական դիրքով շարուած սղոցեալ քառակուսի փայտերու վրայ, այնպէս որ ողկոյզներն բաւական բարձրութեամբ կախուած կը կենան. իսկ ուրիշ կողմեր զանոնք պառկած դիրքով՝ շարք շարք հողակուտից վրայ կը տարածեն։ Տնկելու համար՝ ստորին ծայրը ճիւղ ունեցող որթեր կ'ընտրեն. յետոյ կէս արշին խորութեամբ և նոյնչափ ևս տրամագծով փոսեր կը փորեն, և անոնց մէջ երկ երկու որթ կը դնեն և հողով կը լեցընեն։ Երբ անոնք արմատ արձակեն, իւրաքանչիւր տեղ մի մի որթ կը թողուն, որք երկու երեք տարուան մէջ բաւական ճիւղաւէտ թուփեր ձեւանան և պտուղ ալ կու տան. զանոնք կարգ կարգ՝ առուներու արեւելեան ափանց վրայ կը տեղաւորեն։ Որթերը կը նորոգեն պատուաստելով և ձուբաւ (տաշտաթաղ) ընելով՝ այսպէս. նախ թուփի վրայ առանց կտրելու ճիւղ մի կը թողուն, որ երկու երեք տարուան մէջ բաւական կ'երկըննայ, այնպէս որ յետոյ կարելի կը լինի զայն արմատացընել. երկու տարիէն ճիւղը առանձին տունկ կը ձեւացընեն, այսինքն

1 Երեւանու նահանգի գինեգործութիւնը մանրամասնաբար նկարագրած է պր. Մ. Ս. Աւգակով, Հաւաքածոյից Գ հատորին մէջ. (յէջ 170-174, 204-414)։— Ջէյդլից.

digitised by A.R.A.R.@

կը բաժնեն այն թուփէն՝ ուստի առնուած էր։ Իսկ պատուաստ այն ատեն կ'ընեն, երբ թուփ մը անպտուղ կը տեսնուի։

Գաւառիս լաւագոյն գեղեցկութիւնը՝ այգեւէտ պարտէզներն են, բայց խիստ շատ ալ խնամք կը պահանջեն. գեղացին գարնան սկզբէն մինչև աշնան խորը՝ իւր պարտիզով կը զբաղի։ Գարնան սկիզբը առաջին աշխատութիւն կը համարուի ոռոգումն, ապա հողի տակէն որթերը դուրս հանել, ուր պատսպարած էր աշնան, որպէս զի ձմեռը չսառին. ապա կը սկսին յօսել։ Նախ փոքր սղոցներով կը մաքրեն որթը չորացեալ ճիւղերէն, ապա այնպէս մնացեալներն այլ կը կտրատեն՝ որ իւրաքանչիւր ճիւղին վրայ չորս կամ հինգ աչք մնայ։ Բայց յօտելու զանազան կերպ կայ. սև խաղողի որթին ճիւղերն յօտելու ատեն՝ իւրաքանչիւրին վրայ երկ երկու կամ երեք երեք աչք կը թողուն, իսկ ուրիշ տեսակաց՝ 5—6 աչք. յօտելէն վերջը ձեռք կը զարնեն պարտիզին պեղման։ Այս աշխատութիւնս այն է՝ որ գործաւորը երկաթեայ թիակօք կը փխրեն այն հողը՝ յորում որթը կը զրաւնուի, անոր շուրջ գտնուած հողը կը շրջեն՝ վերին երեսն տակը դարձնելով. որ իբր ամենալաւ պարարտացուցիչ մինչոց կը ծառայէ։ Այսու կ'աւարտին այդեաց մինի գարնանային աշխատութիւնքը։ Երբ որթերն կը ծածկուին դալար ճիւղերով, կը սկսին մաքրել զանոնք աւելորդ բարտնակներէն։ Որթերը երեք անգամ կը յօտեն, և այն ատեն շատերը՝ ոզկոյզ ունեցող ճիւղերը կը ծայրատեն, որով անկէ վերջը ճիւղի տեղ՝ պտղոց քանակը կը մեծնայ։ Ցօթային գօտոյն մէջ այգեւէտ պարտէզքն՝ տարին հինգ անգամ կ'ոռոգուին, աշնան՝ դեռ որթերն հողի տակ չծածկած, գարնան՝ դեռ զանոնք դուրս չհանած, պարտէզն փորելէն առաջ, յետ որթերն փթթելու, և երբ պտուղները հասունանալ կը սկսին։ Իսկ եթէ այգեւէտ պարտէզքն աւազուտ գետնի վրայ գտնուին, այն ատեն զանոնք անգամ մ'այլ օգոստոս ամսոյն առաջին կիսուն մէջ կ'ոռոգեն։

Ձեմ գիտեր թէ կը գտնուի՞ տեղ մի այսչափ բազմազան խաղողի տեսակներ, որ ինչպէս գունով ու ձեւով, այնպէս նաև համով և անուշահոտութեամբ՝ կը տարբերին։ Ձկայ պարտէզ մի՝ ուր մի քանի տասնեակ խաղողի տեսակ չգտնուի։ Մի՛անգամայն բոլոր տեսակներն 60 կարելի է հաշուել, թէ և անոնցմէ ամէնքն այլ առանձին անուններ չունին։ Ըստ գունոց խաղողը կը լինի՝ սև, սև—բալեզոյն (ֆիշնէ), բալեզոյն, դեղնազոյն, կարմրազոյն, սպիտակ և վարդագոյն։ Այն զոյներով որոշեալ տեսակաց իւրաքանչիւրն՝ բազմաթիւ տեսակաց կը ստորաբաժանի, յորոց իւրաքանչիւրն այլ՝ զարձեալ կը զանազանին համով ու ձեւով պտղոցն, հոտով ու թանձրութեամբ կեղեւոց, հիւթաւորութեամբ ճաշակին և այլն։ Այս երրորդ կարգի զանազանութիւններ կը նշանակեմք՝ հետեւեալ ցուցակիս մէջ՝ երկրորդ տեսակաց քովն փակագծից մէջ գրուած թիւերով։ Ուստի

digitised by A.R.A.R.@

Ա. ՍԵՒ ԽԱՂՈՂ

ա. Սեւ-խալիլի (2).
բ. Սապելի (2).
գ. Մալաղի (3).
դ. Սեւ-խաղող (6).
ե. Սեւ աշդարա (2).
զ. Գարաձա (2):

Բ. ՍՊԻՏԱԿ ԽԱՂՈՂ

ա. Խալիլի (1).
բ. Ասկարի (2).
գ. Հիւսէյնի (3).
դ. Կիւրդաշտ (2).
ե. Գիշմիշի (3).
զ. Կատուշի-աչք (3).

է. Որդուբադի (3). ը. Շահբախտի (1). թ. Սլդարա (2). ժ. Մազզամազզի (1). ժա. Գումշի — մամա կամ Ուիշի-բաբա (2). Տապարզա (1):

Իսկ կարմիր, վարդագոյն, բալեգոյն և սեւ-բալեգոյն խաղողներն միասին

ա. Շաֆէի (2). բ. Սխափի (2). գ. Գիշմիշի (2).
դ. Գիւզ-արի (2). ե. Կազզա-շապի (2).

Խաղողն կը սկսի հասունանալ յուլիսի սկզբի օրերուն, իսկ Խալիլի տեսակն՝ երբեմն նաեւ յունիսի վերջերը՝ բաւական հասած կը լինի: Կութքը սեպտեմբերի 15ին կը սկսին. այն ժամանակ՝ խակ ու փտածներն զատելով՝ որք ցքի թորեցնելու կը ծառայեն, բոլոր ողկոյզները հնձանի մէջ կը կրեն. ուր գործաւորք զանոնք ոտքով ճմլելով՝ գինւոյ համար քաղցու կը հանեն: Հնձանը տանց կամ պարտիզաց մէջ՝ մասնաւոր սենեկի մի մէջ կը շինեն քարուկիրով՝ քառակուսի աւազանի մի ձեւով և զառիվայր յատակով. այդ աւազանէն՝ ջրորդանի մի միջոցաւ՝ ճմլելու ժամանակ աւիշը փոքր կլորակ փոսի՝ կամ ամանի մի մէջ կը հոսի, որ ջրորդանի տակ դրուած է, ուսկից զայն կուժերով՝ կանխաւ պատրաստուած կարասներու մէջ կը փոխադրեն, զորս ներքուստ ոչխարի ճարպով օծած են, որպէս զի մէջը օդ ու խոնաւութիւն չըմնայ: Երկու երեք օր վերջը կարասի մէջ սակաւ մի Սապէլ խաղողի քաղցու կը լեցնեն և 10 փունտ (4,1 կիլոգրամ) չանչ, զորս ամէն օր՝ քանի որ դեռ գինին կը խմորի՝ ձեռքով կը շփեն, որով գինին թխակարմիր գոյն մի կ'առնու: Եթէ աւելի եւս Սապէլ խառնեն՝ գինին գրեթէ սեւ գոյն և միանգամայն սեղմիչ համ մի կը ստանայ: Խաղողի չանչն յետ կոխելու՝ կը ճմլեն, բայց այս կերպս ամենահին է. այսինքն, հնձանի մէջ չանչը ի մի հաւաքելով ու շեղջ մի ձեւացնելով, վրան մի քանի քար կը թաւալեցնեն: Սակայն քանի մի գիւղերու մէջ գործածութեան անցած են փայտեայ արկղաձեւ ճնշոցներ, յորս չանչը կը լեցնեն, ու պտուտակաւ և ոլորակաւ միջոցաւ ճնշելով՝ բովանդակ աւիշը կը քամեն: Ճնշելէն վերջն այլ՝ մնացածը կը ծառայէ կամ ցքի թորեցնելու և կամ ի կեր անասնոց: Դարձեալ ցքի թորեցնելու կը

digitised by A.R.A.R.@

ծառայեն՝ կթոց ժամանակ պարտիզին մէջ ժողուած խակ ու փտտած պտուղներն, և սափորոց յատակն հաւաքուած գինւոյ՝ պղտոր թթու և լայծ դիրտը։ Նոր գինին նոյեմբերի սկիզբները կը սկսին գործածել, որովհետև խմորումը այն ատեն հազիւ վերջացած կը լինի. որ կը կախուի մառանաց անպիտան շինութենէն, անոնց մէջն եղած անյարմար բարեխառնութենէն, և դարձեալ անոր համար, որ կարասները (ինչպէս Կախեթի մէջ կ՚լինեն), հօս հողոյն մէջ չեն թաղեր, այլ դուրս գետնի վրայ կը կեցընեն։ Այս պատճառաւ գինին շուտ կը թթուի՝ չնայելով մէջ գտնուած մեծ քանակութեամբ ոգւոյն։ Եթէ հօս այլ սափորներն հողոյ մէջ թաղէին, այն ատեն յիրաւի կարելի էր գինին աւելի լաւ և աւելի երկար պահել (1)։ Ես այսպիսի փորձ մ՚ըրի. 1864 տարւոյն՝ առի զուտ գինի և միջակ կարասի մի մէջ լեցուցի՝ որ ներքուստ մեղրամոմով պատած էր, վրայն ալ հալած ճարպ լեցուցի, խսկ կարասը ամբողջ մինչև ի պարանոց հողի մէջ թաղեցի. այդ գինին երեք տարի պահուեցաւ՝ առանց թթուելու նշան տալու, և ստացաւ նաև թանձրութիւն, ախորժելի համ և անուշահոտութիւն։ Ոմանք գինին՝ տաքցուցած և կաւով զտած քաղցուէ կը պատրաստեն. այսպէս շինուած գինին թէպէտ բնաւ չի թթուիր, բայց միանգամայն այդ պատրաստութեան եղանակին համար անախորժ քաղցրութիւն մի կը առնայ։ Ամենէն լաւ գինին կը ստացուի Նախիջեւան քաղաքէն և Եարիմճի գիւղէն։ Գինւոյ մեծ մասն նոյն տեղը կը սպառի, որով ամենափոքր մաս մի միայն ձիերու վրայ բեռցուցած մերձակայ աւանները կը տարուի ի վաճառ։ Մերձաւորապէս կրնանք ենթադրել որ իւրաքանչիւր այգեւէտ պարտիզէն, միջին հաշւով, հինգ հինգ կարաս գինի կը ստացուի, իւրաքանչիւր կարասի մէջ 10 պուտ։ Բոլոր գաւառին մէջ այն պարտէզներն՝ որոց խաղողը միայն գինի պատրաստելու կը ծառայէ՝ 1200 համարելով, կրնանք ըսել՝ որ տարին 6000 կարաս կամ 60,000 պուտ գինի կը ստացուի։ Նախիջեւանու գինին՝ միջին հաշւով՝ մի պուտն 1 րուբլի կը ծախուի, հետևապէս երեք վիճակքն միանգամայն 60,000 րուբլի գինի կը հասցընեն, որ ամենևին տնտեսական շահու նշանակութիւն մի չունի, ըստ որում բովանդակն առ տեղեաւ կը սպառի։

Մրգաբեր պարտէզներ (որ պաղչի անուամբ ծանօթ են)՝ ընդհանրապէս շատ ընդարձակ չեն. մեծաւ մասամբ 2—3—4—5 պուտեան երկիր կը գրաւեն, այսինքն է, այնչափ տարածոց մի՝ ուր սովորաբար 2—3—4—5 պուտ ցորեն ցանուի։ Ասոնք միշտ տանց մօտ կը գտնուին և այգիներու պէս պատած են 2—3 արշին բարձրութեամբ կաւորմով։ Ասոնց մէջ կրնանք հանդիպիլ հարաւային կլիմայի վերաբերեալ ամէն տեսակ պտղաւէտ ծառոց. ինչպէս՝

1. Պր. Զէլլինսկին գինւոյ սպասութիւնը՝ միայն կարասները ի հող թաղելու մէջ կը փնտռէ, մինչդեռ անհրաժեշտ է բովանդակ գինեգործութեան կերպը փոխել։ Եւրոպայի մէջ միշտ առանց թաղելու կ՚ըլլան, բայց երկարատև գինիներ ունին։ Զէյդլից։

digitised by A.R.A.R.@

տանձենի, խնձորենի, ընկոյզ, կաղին, սաղորենիք՝ բազմատեսակ ալոճ, դեղձ, ծիրան (դայտենի), բրենի, փշատի, բալենի, կեռասենի, և այլն։ Մասնաւոր կերպով Որդուատ երևելի է ամենալաւ պտուղներով, ուր սիրոյը կը գտնէ առաջին կարգի ծիրան, խոշոր ու քաղցրահամ բազմատեսակ տանձեր, աքսնելի խնձորներ, և այլն։ Բիլան գիւղն նշանաւոր է երկրիս ամենէն հազուագիւտ կեռասներով, որք իբր 12 տեսակ են և գտնուզան գոյներով, ինչպէս՝ սև, դեղին, ճերմակ, գունագոյն, կարմիր, նաբքենի գագոյն, և այլն։ Խնձորներու մէջ՝ որոնք անուանի են Ցնակերտ, Կալակի, Ցունիս և Ալնուս գիւղերն, մասաւորութեան արժանի են երեք տեսակքս՝ Եազը, Սուշտանը և Դաձաբի. վանդի զասունք կարելի է բոլորովին թարմ պահել մինչև յուլիս ամիս։ Ցանձի ամենալաւ տեսակները կը գտնուին Որդուատու և Ազուլիսի մէջ։ Ցանձի տեսակներէն ընտրելագոյն են՝ Սինի և Ադրիանի, իսկ ծիրաններէն՝ Ադի–Ցալիր և Իգձի–Նապատ։ Որդուատու բաժնին մէջ երկու տեսակ պտուղ ևս կը գտնուի, Շադրայի և Ցադրայի կոչուած, որք ծիրանը, դեղձենին և բալորենին փոփոխակի իրերաց վրայ պատուաստելով յառաջ կու գան։ Պարտիզային պտուղներն գլխաւորապէս չոր կը ծախուին. և չոր ծիրանն, ալոճն և Թուզն՝ պարտիզատիրոջ գլխաւոր շահաբերն են. յորոց առաջին երկուքն ուտելու կը գործածուին. իսկ վերջինէն՝ թուրի ըստած ցքին կը հանեն։ Որդուատու բաժնին մէջ 800 պուդ չոր Թուզ կը հանեն, որ կրնայ տալ իբրև 2000 Թունկի (1) ցքի, 4000 ռուբլի արժէքով։

Նմանապէս փշատ (Elaeagnus) ալ շատ կը ծախուի։ Ցաքաձոր, Ցանձիկ, Էրդէշ, Գոբլ–գլլաղի, Ազիա, Եայճի և Ախուրի գիւղերու մէջ 600 պուդ փշատ կը ստացուի, պուդը կրնայ արժել ռուբլի մի։

Պարտիզագործութեան վրայ խօսելով կարելի չէ չյիշատակել՝ Դարալագըզի Ազիա գիւղին մօտ գտնուած Ցռանապի ծառոց ամբողջ պուրակ մի, որ հին ժամանակները հոս գտնուած պարտիզաց մնացորդքն են։

Ստորագրած տեղեացս մէջ բաց ի պարտիզագործութենէ՝ կը զբաղին նաև միջակ պուրակաց դարմանով, որոց թիւը 588ի կը հասնի։ յորոց 369ը Հայոց և 219ը Թաթարաց է։ Ասոնք կը բաղկանան ուռենի, կաղամախի (հասարակ և արծաթագոյն) և կենձի ծառերէ. կարելի է հանդիպիլ երբեմն նաև Հացի ծառի։

Մի քանի խօսք ալ ըսեմ՝ պարտիզային բուսոց հիւանդութեանց վրայ։ Ասատարկոյս այդ հիւանդութեանց մէջ ամենէն վնասակարն է Բծախտ (oïdium), որ ինչպէս յայտնի է՝ ուրիշ աշխարհաց մէջ ևս շատ վնասներ ըրաւ։ Նախկինանու վիճակին մէջ առաջին անգամ խաղողի հիւանդութիւնը երևեցաւ

1. Վրայ թունկի հեղուկաչափն է, որ ըստ ոմանց և աւելի հին կարծեաց՝ իբր 8.9 շիշ կամ 1 վեդրո ռուս. = 42. 29 ֆռանկ լիտր է, իսկ ըստ այլոց և աւելի նոր՝ 5 շիշ կամ 1/2 վեդրո = 11. 17 լիտր։

digitised by A.R.A.R.@

ի սկիզբն վաթսներորդ (1860) տարվանց, և խաղողի մի քանի տեսակ միայն հաստատեց, մասնաւորապէս կատուի-աչք բուսուցը։ Հիւանդութիւնը նախ խաղողի խակ հատերու վրայ կ'երևէր՝ փոքր զորշագոյն բծերու նման, որք հետզհետէ կը մեծնան և վերջը ապականութիւնը պտղոյն ներսը կը թափանցէ։ Առաջին անգամ որ երևցաւ՝ պարտիզատերը մեծ կարուտ ըրին, մինչև շատերը մաքերնին դրին որթերը բնաջինջ ընել։ Բայց հետևեալ տարիները հիւանդութեան ազդեցութիւնն կամաց կամաց նուազեցաւ, իսկ հիմայ ցանցառ կ'երևի։ Խաղողի հիւանդութիւնն ընդհանրապէս տուտերի մէջ գտնուած ողկոյզներուն կը հանդիպի. և ահա այս պատճառաւ խաղողի շատ մը տեսակներ՝ որոց տերևները խիտ չեն, որով և ողկոյզնին այլ աւելի արևուտս՝ բծախտի ենթակայ չեն։

Վերոգրեալն նման հիւանդութիւն մ'ալ կայ ծիրանենու և դեղձերու վրայ. այս ալ նոյնպէս գորշ բծերու պէս կ'երևի պտղոց վրայ, որով պտղոյն թէ հաստատանալն և թէ անուշը կը դանդաղի։ Դիտուած է որ այդ հիւանդութիւնը գլխաւորապէս այն տարիները կը ներգործէ՝ յորս ստուերի եւ խաշտութիւն կը լինի։ Սակայն ոչ մէկ հիւանդութիւն ծառոց վրայ այն աստիճանի վնասակար և մահաբեր ազդեցութիւն չընէր՝ ինչպէս թրթռուկն։ Այս կ'երևի խնձորենեաց, սալոճի և սալորի ծառոց վրայ զարնան սկիզբը՝ մանր ճճեաց ձևով, և հիւծախտ բռնուածի մի թրթռուկ նման՝ մաղ զարձրնելով կը ոչնչացնէ բոլոր տերևներն ու ծաղիկները, և կը պատէ ամբողջ ծառը արմատէն մինչ ի գագաթն՝ խիտ ատայնով մի։ Այդ թրթուրներուն դէմ ազդու միջոց կը տեսնուի՝ ձկան փորոտեռը և թեփերով հանդերձ թթուած ջուրը, որով պէտք է գարնան երեք անգամ այն ախտացեալ ծառը ցողել. այսու յաջորդ տարիներ ծառը այն միջատներէն կ'ազատի։

Շարուռնակելի

ԱԼՊԵԱՆՆԵՐՈՒ ԱՆՑՔԸ (1)

Տէր Աստուած կուրցուց զանոնք, Տէր ինծ եղաւ առաջնորդ։
Բանակէն ելայ անտես, Նախկին ճամբաս բրնռեցի.
Ցետոյ ծախակողմը շեղեցայ դէպ՝ հիւսիս,
Եւ Թողով վարուն ուղիքը՝ միջամուխ եղայ մտայլ
Եւ անծուկ հովտի մը մէջ. այլ մրչափ քայլս յառաջէր,
Նայուածքիս առջև ծորն այնչափ աւելի կ'ընդլայնէր։
Ցետայ հոն ոչխարներու թափառուտ հօտ և հիւղեր.
Էր այն տեղը վերջին մահկանացուաց օթևան։
Տուարածի մը քով մնայ, իջևանել խնդրեցի,
Եւ գիշերը թաւամազ մորթերու վրայ առի քուն։

1. Եր պատմէ Պարոնեան տարեգրագրը Մեծին Կարապետ Ադելի ոգերգութեան մէջ։

digitised by A.R.A.R.@